Մրցույթ՝ ՀՀ Արմավիրի մարզի «Գետաշենի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի երաժշտության (8 դ/ժ), կերպարվեստ (2 դ/ժ), տեխնոլոգիա (4 դ/ժ) թափուր տեղի համար

Ուսուցչի վարձատրությունը ՝ըստ դասաբաշխման:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է ՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

-դիմում (Ձև 1),մեկ լուսանկար 3x4 չափի,

-բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),

-անձը հաստատող փաստաթուղթ,

-«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը(առկայության դեպքում),

-ինքնակենսագրություն (Ձև 5),

-այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

-ՀՀ արական սեռի քաղաքացիները նաև զինվորական գրքույկ,

-հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

-որակավորման տարակարգ ունենալու դեպքում ՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ,մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք: Փաստաթղթերն ընդունվում են 2023 թվականի սեպտեմբերի 19-ը ներառյալ , ամեն օր ժամը 10:00-ից մինչև 15:00, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Փաստաթղթերի ընդունումը կլինի ըստ կարգի:

Մրցույթը կկայանա 2023 թվականի սեպտեմբերի 20-ին ժամը 14:00, Արմավիրի մարզի Մեծամոր խոշորացված համայնքի Գետաշենի միջնակարգ դպրոցում:

Տեղեկությունների համար զանգահարել՝ 093437505 հեռախոսահամարով: